

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2019թ. նոյեմբերի 16-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

ք. Վանաձոր

Նիստին ներկա էին «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՎՊՀ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) 22 անդամներից 19-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր Խորհրդի նախագահ, «Թրանսփարենսի ինտենեշենել հակակոռուպցիոն կենտրոնի» հետազոտությունների համակարգող Դիանա Տեր-Ստեփանյանը: Քարտուղար՝ ՎՊՀ պատմության ամբիոնի դոցենտ Ս. Աղաջանյանը:

Դ. Տեր-Ստեփանյան-Հարգելի՛ գործընկերներ, շնորհակալ եմ բոլորին, նիստին մասնակցելու համար: Օրակարգը բոլորդ ստացել էք: Մինչև օրակարգը քվեարկության ներկայացնելն ուզում եմ ծանոթացնել հոգաբարձուների խորհրդի անդամ Վանո Եղիազարյանի նամակին (նամակը կցվում է): Պարոն Եղիազարյանն առաջարկում է օրակարգից հանել կանոնադրական փոփոխությունների հարցերը, քանի որ դրանք առաջին հերթին պետք է քննարկվեն ՎՊՀ մարմիններում, բացի այդ ուշացմամբ են տրամադրվել խորհրդի անդամներին: Պարոն Եղիազարյանը գտնում է, որ ՎՊՀ ռազմավարությունը պետք է ներկայացնի ընտրված ռեկտորը, ոչ թե պաշտոնակատարը:

Գտնում եմ, որ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն ունի նույն լիազորություններն ինչ-որ ընտրված ռեկտորը, և որևէ կերպ կաշկանդված չէ ռազմավարություն մշակելու և ներկայացնելու հարցում:

Այնուհետև նշում է, որ դեռևս հունվարին՝ առաջին նիստում, որոշվել էր մարտ ամսին կազմակերպել ռեկտորի ընտրություններ: Բոլոր արձանագրությունները կան, կան նաև բոլոր որոշումները, որևէ տեղ նման որոշում չի կայացվել, եղել է ընդամենն առաջարկ:

Պարոն Եղիազարյանը գտնում է, որ խորհրդի նախագահն ընտրվել է խախտումներով, ուստի առաջարկում է անվստահություն հայտնել նախագահին: Լավ կլիներ, որ պարոն Եղիազարյանը ներկա լիներ և ինքը ներկայացներ՝ ինչ խախտումների մասին է խոսքը:

Պարոն Եղիազարյանն առաջարկում է նաև անհապաղ հայտարարել ռեկտորի թափուր տեղի համար մրցույթ: Այս առնչությամբ ես ուզում եմ հստակ ձևակերպել, որ այս ձևակերպումը, որ համալսարանը ռեկտոր չունի անընդունելի է, քանի որ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարն օժտված է բոլոր այն իրավունքներով, որն ունի ընտրված ռեկտորը: Մենք չենք կարող կաթվածահար անել բուհի աշխատանքը՝ ելնելով նրանից, որ ժամանակավոր պաշտոնակատար է:

Առաջարկում եմ քննարկել անվստահության հարցը օրակարգ մտցնելու և ռազմավարական ծրագրի քննարկումն ու հաստատումը օրակարգից հանելու հարցերը:

Ա. Անափիոսյան-եթե խորհրդի անդամը, ով առաջարկներ է ներկայացրել, բայց նիստին չի մասնակցում, հիմա դա ձեր առաջարկն է, թե դուք լիազորված եք այդ անդամի կողմից իր առաջարկներն օրակարգում ընդգրկել:

Դ. Տեր-Ստեփանյան-պարոն Եղիազարյանը լիազորել է Ս. Աղաջանյանին, որ նիստում ներկայացնի իր առաջարկները:

Ս. Աղաջանյան-պարոն Եղիազարյանն առաջարկել է նիստի ժամանակ ներկայացնել իր նամակի բովանդակությունը և նշել է, որ ինքը օրակարգի առաջարկվող երկու հարցին էլ էլեկտրոնային քվեարկությամբ դեմ է քվեարկում:

Դ. Տեր-Ստեփանյան-լիազորման կարգ մենք ունենք, և ձայները հաշվելու ժամանակ մենք հաշվի կառնենք իր դեմ ձայները:

Ա. Շագաֆյան-ես առաջարկում եմ հստակ դնենք, թե օրակարգում ինչ ունենք, եթե պարոն Եղիազարյանի առաջարկներն ընդունվի դրանք ևս առանձին դնենք քվեարկության: Այսինքն, ունենք օրակարգի երկու տարբերակ, որոնք առանձին-առանձին դնենք քվեարկության: Կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ առաջարկներն ես էլ եմ ուշ ստացել, առաջարկում եմ, որ այսուհետ քննարկման ներկայացվող փաստաթղթերն ուղարկել ավելի շուտ: Առաջարկում եմ նաև, որ եթե օրակարգում ռազմավարական նշանակության հարց է ընդգրկվում, ներկայացնող կողմը հակիրճ տեղեկանք պատրաստի հարցի վերաբերյալ:

Մ. Շահվերդյան-մենք այս հարցը բազմիցս բարձրացրել ենք, օրակարգը խնդրահարույց է, ես ընդհանրապես այս օրակարգին դեմ եմ: Նախ, բոլոր փաստաթղթերն ուշ ենք ստացել: Ես բոլորին նամակ եմ գրել, որ իմաստ չունի կանոնադրությանն անդրադառնալ, քանի որ պարզ չէ, թե ո՞վ է աշխատել փոփոխությունների վրա: Կանոնադրության և աշխատակարգի մեջ հակասություններ կան, կանոնադրության մեջ բացակայում է նաև բուհի առաքելության վերաբերյալ դրույթը:

Դ. Տեր-Ստեփանյան-փաստորեն ձեր առաջարկն է կանոնադրության հարցը հանել օրակարգից: Ես նամակով անդրադարձել եմ այս հարցին, առաջարկելով սկսել փոփոխությունների գործընթաց:

Ա. Ղուկասյան-փաստորեն պարոն Եղիազարյանը առաջարկներ է ուղարկել, բայց ինքը չի ներկայացել նիստի, ուստի առաջարկում եմ այս հարցն ընդհանրապես չքննարկել:

Ա. Անափիոսյան-ես երկրորդում եմ պարոն Ղուկասյանին:

Է. Խաչատրյան-օրակարգի հետ կապված. 1. փաստացի լիազորագիր չունենք, բայց կարող ենք դիտարկել ձեր առաջարկությունը օրակարգում ներառելու հարցը:

Դ. Տեր-Ստեփանյան-ն՞ր հարցը:

Է. Խաչատրյան-Ձեզ անվստահություն հայտնելու հարցը:

Դ. Տեր-Ստեփանյան-եթե խորհրդի անդամի մոտ նման հարց առաջացել է, ես նպատակահարմար եմ գտնում այն ընդգրկել օրակարգում:

Է. Խաչատրյան-եթե դուք առաջարկում եք հարցը ներառել օրակարգում, մենք պատրաստ ենք քննարկման, երկրորդ, ինչ վերաբերում է կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու հարցը օրակարգից հանելուն, ապա այսօր մենք միայն կանոնադրական փոփոխությունների սկիզբն ենք դնելու, ապա անհրաժեշտություն չկա այն օրակարգից հանելու:

Մ. Շահվերդյան-եթե կրթության մասին օրենքի նախագիծը դրվել է շրջանառության մեջ, որը շուտով կընդունվի, ինչ կարիք կա կանոնադրական փոփոխություններ սկսելու:

Է. Խաչատրյան-սա կանոնադրության փոփոխության ընդամենն առաջին քննարկումն է, և չեմ կարծում, որ նիստի վերջում կանոնադրական փոփոխությունները հաստատված կլինեն:

Մ. Շահվերդյան-ես էլ եմ կողմ, որ քննարկում սկսենք:

Դ. Տեր-Ստեփանյան-առաջարկում եմ օրակարգի հարցը ձևակերպենք այսպես. ՎՊՀ կանոնադրության մեջ փոփոխությունների քննարկում:

Մ. Շահվերդյան-առաջարկում եմ խումբ ստեղծել, որը կգրադվի կանոնադրական փոփոխությունների նախապատրաստման աշխատանքներով:

Է. Խաչատրյան-գտնում եմ, որ կանոնադրական փոփոխությունների հարցը պետք է քննարկվի ՎՊՀ մարմիններում: Խնդրում եմ, այսուհետ նիստից առաջ փաստաթղթերն ավելի շուտ ուղարկել խորհրդի անդամներին:

Ա. Անափիոսյան-առաջարկում եմ, որ օրակարգի երկրորդ հարցը ձևակերպվի կանոնադրության մեջ փոփոխությունների քննարկում, երկրորդ, կանոնակարգը պահանջում է, որ խորհրդի անդամն իր մտահոգությունները հայտնի կամ լիազորագրով վստահված անձի միջոցով, կամ անձամբ ինքը ներկայացնի, ուստի առաջարկում եմ խուսափենք կեղծ օրակարգերից: Վարման կարգի հետ կապված՝ առաջարկում եմ օրակարգի հարցերը կետ առ կետ հաստատենք այս փոփոխություններով օրակարգը և անցնենք քննարկումների:

Դ. Տեր-Ստեփանյան-այնուամենայնիվ ես պնդում եմ անվստահություն հայտնելու հարցն ընդգրկել օրակարգում: Այսպիսով, 1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՎՊՀ ռազմավարական միջնաժամկետ 2019-2021 թվականների պլանի» հաստատում: 2. ՎՊՀ կանոնադրության մեջ փոփոխությունների քննարկում, 3. ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահին անվստահություն հայտնել: Կամ գուցե երրորդ հարցը դարձնենք օրակարգի առաջին հարց:

Ս. Աղաջանյան-առաջարկում էմ օրակարգի հարցերը քվեարկել առանձին-առանձին, գուցե որևէ հարց ընդհանրապես օրակարգում չի ընդգրկվում:

Հ. Ղազարյան-ես առաջարկում էմ օրակարգում ընդգրկել նաև ՎՊՀ ռեկտորի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու հարցը:

Դ. Տեր-Ստեփանյան-պարոն Ղազարյան, փաստորեն դուք առաջարկում եք օրակարգում ընդգրկել նաև ռեկտորի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու հարցը:

Է. Ալեքսանյան-բնականաբար ռեկտորի ընտրության հարց կա, բայց ասեմ, որ ՎՊՀ-ն այսօր նորմալ կառավարվում է: Գտնում էմ, որ կանոնադրական փոփոխություններն անհրաժեշտ են, դրա ընդունումից հետո բավական ժամանակ է անցել, որը բավարար է հասկանալու համար նրանում առկա թերությունները: Առաջարկում էմ ռեկտորի ընտրության հարցի քննարկումները սկսել այն ժամանակ, երբ կանոնադրական փոփոխությունների քննարկումները կանցնեն ՎՊՀ բոլոր օղակներով, կներառվի նաև առաքելություն:

Հ. Ղազարյան-գտնում էմ, որ բոլոր բուհերի համար պետք է դրվեն ռեկտորի ընտրության նույն չափանիշները:

Ը. Խաչատրյան-առաջարկում էմ օրակարգի հարցերը առանձին-առանձին դնել քվեարկության:

Դ. Տեր-Ստեփանյան-անցնում ենք օրակարգի կետերի հաստատմանը:

1. ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահին անվստահություն հայտնելու հարցը:

Կողմ՝ 2, դեմ՝ 13, ձեռնպահ՝ 1

Հարցն օրակարգում չի ընդգրկվում:

2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՎՊՀ ռազմավարական միջնաժամկետ 2019-2021թթ. գործողությունների պլանի» քննարկում և հաստատում:

Կողմ՝ 16, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

3. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխությունների քննարկում:

Կողմ՝ 15, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

4. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր տեղի համար մրցույթի հայտարարություն:

Կողմ՝ 11, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 1

Այսպիսով՝ հաստատվեց հետևյալ օրակարգը.

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՎՊՀ ռազմավարական միջնաժամկետ 2019-2021 թվականների գործողությունների պլանի» քննարկում և հաստատում:

2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխությունների քննարկում:

3. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր տեղի համար մրցույթի հայտարարություն:

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՎՊՀ ռազմավարական միջնաժամկետ 2019-2021թթ. գործողությունների պլանի» քննարկում և հաստատում:

Մ. Շահվերդյան-քանի որ, անցյալ տարի պլանը չհաստատվեց, մենք կազմեցինք այս պլանը, որպեսզի կարողանանք առաջ շարժվել: Մեր ռազմավարական պլանի հնգամյա ժամկետը լրացել էր, նորը կարող է կազմել միայն ընտրված ռեկտորը: Այդ պատճառով էլ կազմվել է գործողությունների պլանը, որպսզի հավատարմագրման ժամանակ փաստաթուղթ ունենանք ներկայացնելու: Քանի որ ռեկտորի ընտրությունը ձգձգվում է, ուստի առաջարկում եմ հաստատել այս գործողությունների պլանը:

Ս. Թումանյան-ըստ էության այս գործողությունների պլանը պետք է բխեր ռազմավարությունից, սակայն բոլորիս հայտնի պատճառով գնացել ենք հակառակ ուղղությամբ՝ սկզբում ներկայացրել ենք գործողությունների պլանը:

Դ. Տեր-Ստեփանյան-երեկ մենք ստացել ենք ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլն անցնելու վերաբերյալ եզրակացությունը:

Ս. Թումանյան-զեկույցը ստացել ենք, որը բավականին ծավալուն է, դեռևս չեմ հասցրել մանրամասն ծանոթանալ, այն մասերը, որոնք նայել եմ, իմ փորձը հնարավորություն է տվել նկատել թե ինչ խնդիրներ կարող են առաջանալ բարելավման ծրագիր մշակելու համար: Հիմա, երբ նայում ենք կառավարման համակարգի բարելավումը, որ այս պահին մինուս ենք ստացել, գործողությունների պլանում նշված քայլերն իրենց ցուցիչներով կմտնեն բարելավման մեր ծրագրի մեջ: Պլանի որոշ կետերի վերաբերյալ զեկույցի մեջ արդեն կա կարծիք, և մենք դրանք պետք է դարձնենք բարելավման ծրագրի դրույթներ: Կարող եմ փաստել, որ բարելավման պլանն ի դեմս այս գործողությունների պլանի պատրաստ է: Մնացածը խորհրդի որոշելիքն է, թե ինչպես է վերաբերվում այս պլանին:

Դ. Տեր-Ստեփանյան-նախատեսվում է, որ լինելո՞ւ է և՛ բարելավման պլան, և՛ օպերացիոն պլան:

Ս. Թումանյան-այո, միշտ էլ այդպես է եղել: Բուհը զեկույցից հետո, ներկայացնում է իր առարկությունները: Հավատարմագրման հանձնաժողովը դրանք քննարկելուց հետո ներկայացնում է իր եզրակացությունը՝ կամ հավատարմագրում է, կամ էլ մերժում:

Է. Խաչատրյան-նշեմ, որ նման փաստաթուղթ ես չեմ ստացել և մինչև այս օրակարգի առաջադրումը ծանոթ չեմ եղել սրա բովանդակությունը: Երբ նշում եք, որ հավատարմագրման հանձնաժողովը կառավարման մասով մինուս է գնահատել, կասեք, կոնկրետ, որ սեզմենտներն են մինուս գնահատվել: Ես զեկույցին ծանոթ չեմ:

Ս. Թումանյան-ես հիմա չեմ կարող նման հարցերի պատասխանել: Կարող եք այս հարցը չքննարկել, ես ասեցի, որ ստացել եմ երեկ, դեռևս ամբողջությամբ չեմ ծանոթացել՝ այս պահին դեռևս ուսումնասիրում եմ:

Է. Խաչատրյան-ինձ համար կարևոր է իմանալ, թե ի՞նչ թերություններ կան, և գործողությունների պլանում ներառված կետերը վերացնում են արդյո՞ք այդ թերությունները: Եվ պետք է հասկանալ, թե ո՞վ է գործողությունների պլանի պատասխանատուն:

Ս. Թումանյան-կարելի է պլանում ավելացնել մի սյունակ՝ նշելով առանձին կետերի պատասխանատուներին:

Դ. Տեր-Ստեփանյան-գործողությունների պլանում պետք է ավելացնել պատասխանատուներին՝ յուրաքանչյուր գործողության համար պետք է, հստակեցնել և չափելի դարձնել ցուցիչները և ավելի հստակեցնել ժամկետները:

Է. Խաչատրյան-եկեք հասկանանք՝ այս փաստաթուղթը պետք է բուհին, թե ոչ:

Ս. Թումանյան-կարող է և չլինել:

Մ. Շահվերդյան-այս փաստաթուղթը առավել կարևոր էր, որ ընդունվեր 2019թ. առաջին նիստի

Ա. Անափիտայան-Ակնհայտ է, որ այս փաստաթուղթը կարևոր է բարելավման ծրագիրն ընդունելու տեսանկյունից: Առաջարկում եմ այս փաստաթուղթն ընդունենք, մինչև կգա նոր ռեկտորն՝ իր հայեցակարգով, այդ ժամանակ գործողությունների պլանը կհամապատասխանեցնենք ռազմավարությանը: Առաջարկում եմ գործողությունների պլանում ավելացնել մի նախաբան՝ ռազմավարական ուղղությունների մասին:

Դ. Տեր-Ստեփանյան-բարելավման պլանն ի՞նչ ժամկետում պետք է ներկայացվի:

Ս. Թումանյան-ներկայացման վերջնաժամկետը նոյեմբերի 29-ինն է: Նախորդ հավատարմագրման ժամանակ ունեցել ենք երեք մինուս՝ կառավարում, համագործակցություն, հետազոտություն, այժմ երկուսն է՝ կառավարում և հետազոտություն: Օրինակ, Ա. Սանթրոյանն ասել է, որ համաձայն չէ 6-րդ ենթաբաժնի հետ և պատրաստվում է առարկություններ ներկայացնել, որոնք փորձագետները կքննարկեն:

Է. Խաչատրյան-հնարավոր է ծանոթանալ փորձագիտական խմբի եզրակացության հետ:

Ս. Թումանյան-այդ հարցը հարկավոր է ճշտել փորձագիտական խմբի հետ, բայց որքան գիտեմ, մինչև վերջնական եզրակացությունը դա հրապարակման ենթակա չէ:

Դ. Տեր-Ստեփանյան-այսպիսով, առաջարկվում է գործողությունների պլանին ավելացնել նախաբան, հայեցակարգային դրույթներ՝ որոնց վրա հենվում է այս պլանը, անդրադարձ արվի նախորդ պլանի կատարողականին, հստակեցվեն և չափելի դարձնեն ցուցիչները, ավելացնել պատասխանատուներին և ընդունել: Մի խոսքով, բարելավենք՝ նոր միայն հաստատենք:

Ա. Անափիոսյան-գուցե գործողությունների պլանի բարելավման համար ժամկետ սահմանվի, և հաստատվի էլեկտրոնային քվեարկությամբ:

Դ. Տեր-Ստեփանյան-առաջարկում եմ գործողությունների պլանի բարելավման և հաստատման համար վերջնաժամկետ հաստատել մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը:

Հարցը դնում եմ քվեարկության. ով է կողմ, որ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՎՊՀ ռազմավարական միջնաժամկետ 2019-2021 թվականների գործողությունների պլանը» բարելավվի և մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը դրվի էլեկտրոնային քվեարկության:

Կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշվեց.

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 4-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը բարելավել «ՎՊՀ ռազմավարական միջնաժամկետ 2019-2021 թվականների գործողությունների պլանը» և ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխությունների քննարկում:

Դ. Տեր-Ստեփանյան-հարգելի՛ գործընկերներ, անցնենք օրակարգի երկրորդ հարցի քննարկմանը: Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու հարցին անդրադարձել ենք դեռևս մարտ ամսին, երբ քննարկվում էր «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը: Այդ ժամանակ ես դիմեցի գիտխորհրդին՝ նշելով, որ նոր օրենքով պայմանավորված լինելու են կանոնադրական փոփոխություններ և առաջարկեցի նաև գիտխորհրդին հանդես գալ փոփոխությունների առաջարկներով թե՛ գիտխորհրդի մասով, և թե բուհի համընթաց զարգացման տեսանկյունից կանոնադրության մյուս մասերի վերաբերյալ: Արձագանքը միանշանակ չէր, տարակարծություն առաջացավ, թե ինչու է փոխվում կառավարության ընդունած որոշումը: Ինչին արձագանքեցի, որ և՛ կառավարության որոշումներում, և՛ օրենքներում կարող են փոփոխություններ առաջարկվեն և ընդունվեն՝

անհրաժեշտությունից պայմանավորված: Արդյունքում, առաջարկեցի 10-օրյա ժամկետում գիտխորհրդի անդամներին առաջարկություններ ներկայացնել: Արդյունքում արձագանքեց միայն Ա. Սանթրյանը՝ ներկայացնելով մի քանի փոփոխություն: Միաժամանակ նաև դիմել եմ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը, որից ևս որոշ առաջարկներ են ստացվել: Այս պահին ունենք նշված երկու փաստաթղթերը: ԿԳՄՍ կողմից փոփոխության առաջարկները երկուսն էին. ՎՊՀ-ի կողմից «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն և ոչ թե Արդարադատության նախարարությունը, ինչպես նշված է գործող կանոնադրության մեջ: Մյուս առաջարկը վերաբերում է ՎՊՀ կանոնադրության 57-րդ կետին, որը, ելնելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծից, առաջարկվում է ձևակերպել հետևյալ կերպ. Համալսարանի ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի գիտական աստիճան և՝

- 1) բուհում դասավանդման և վարչական աշխատանքի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ կամ,
- 2) գիտական և վարչական աշխատանքի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ կամ,
- 3) բարձրագույն կրթության և գիտության համակարգի ղեկավար աշխատանքի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

Հարկավոր է հաշվի առնել նաև, որ շրջանառության մեջ է դրված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը, որը քննարկվել է նաև համալսարանում: Հետագայում, երբ նոր օրենքն ընդունվի, կանոնադրության մեջ ավելի շատ փոփոխությունների անհրաժեշտություն կառաջանա:

Է. Խաչատրյան-բացի նշված առաջարկներից, մենք նոր առաջարկներ անելու իրավունք ունենք:

Դ. Տեր-Ստեփանյան-միանշանակ, մենք հիմա միայն սկսում ենք քննարկումը:

Վ. Եղիազարյան-նախորդ նիստում ես առաջարկություններ էի արել մի շարք կանոնակարգերում փոփոխություններ անելու վերաբերյալ: Այդ հարցերը հիմա չեն դրվել քննարկման: Հարցերից մեկի վերաբերյալ իրավաբանը նշել է, որ կա ոչ միայն աշխատանքային օրենսգրքի խախտում, այլ նաև խախտվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթը:

Դ. Տեր-Ստեփանյան-Մենք չենք կարող ամեն նիստին անդրադառնալ և քննարկել Ձեր բարձրացրած հարցերը, դրանց առնչությամբ համալսարանի իրավաբանը կետ առ կետ տվել է պաշտոնական պատասխան:

Վ. Եղիազարյան- ճիշտ չեք ասում, ես պատասխան չեմ ստացել:

Դ. Տեր-Ստեփանյան-Ասեմ ավելին, իրավաբանի պատասխանը Ս. Թումանյանի և Ա. Սանթրոյանի պարզաբանումների հետ միասին ս. թ. ապրիլի 8-ին ուղարկվել է ոչ միայն ձեռք, այլև խորհրդի բոլոր անդամներին, որոնք ևս կարող ենք փաստել դա: Ստուգեք ձեր էլ. փոստը, ծանոթացեք այդ պատասխանների հետ և եթե կան դրանից բխող գործողություններ՝ ձեռնարկեք:

Վ. Եղիազարյան-դեռևս հունվարին առաջարկեցի, որ ռեկտորի թափուր տեղի համար մրցույթ հայտարարվի, վճռվեց, որ հայտարարությունը կտրվի մարտին, բայց այդպես էլ հայտարարություն չեղավ՝ խորհրդի անգործության պատճառով:

Ա. Անափիոսյան-պարոն Եղիազարյան, օրակարգը վաղուց հաստատված է, եկեք շարժվենք օրակարգով:

Դ. Տեր-Ստեփանյան-Նման որոշում, «վճիռ» չի եղել, առաջարկում եմ քննարկել այսօրվա օրակարգային հարցերը:

Մ. Շահվերդյան-մենք այժմ չենք կարող կանոնադրական փոփոխությունները հաստատել, հարկավոր է սպասել օրենքին, չի կարելի հիմա հապճեպ որոշումներ կայացնել: Հիմա ընդամենը քննարկում ենք, բոլոր փոփոխությունների համար հարկավոր է հանձնաժողով ստեղծել, որը թիմային աշխատանք կկատարի:

Է. Խաչատրյան-ինչպես նշեց պարոն Ա. Ղուկասյանը, եթե քննարկում ենք ռեկտորի ընտրության հետ կապված հարցերը, ապա կանոնադրության քննարկումը կարևորվում է: Ես գտնում եմ, որ այս երկու հարցերը փոխկապակցված են:

Վ. Եղիազարյան-նախագծի այդ մասով քննարկումներ կան՝ գիտխորհուրդը այդ մասին ներկայացրել է իր կարծիքը: Ռեկտորի թեկնածուի համար սահմանելով գիտությունների թեկնածուի աստիճան, մենք պատահական մարդկանց համար բացում ենք բուհի դռները:

Է. Խաչատրյան-բուհի կառավարման մարմին հանդիսանում է հոգաբարձուների խորհուրդը: Այժմ մենք խոսում ենք ոչ թե գիտխորհրդի նախագահի, այլ՝ ռեկտորի մասին:

Հ. Ղազարյան-կարծում եմ, որ թեկնածուին ներկայացվող պահանջները պետք է խստացվեն:

Ա. Անափիոսյան-օրենքի նախագծով նախատեսվում է, որ թեկնածուին ներկայացվող պահանջները երեք տարի հետո խստացվելու են: Նոր օրենքով ունենալու ենք գիտական մեկ աստիճան: Համաձայն եմ այն տեսակետին, որ մարդու գործնական հատկանիշների հետ գիտական աստիճանը կապ չունի: Ինչ վերաբերում է պատահական մարդկանց ռեկտորի պաշտոնում հայտնվելու մտահոգությանը, ասեմ, որ ի վերջո ընտրությունը կատարում է հոգաբարձուների խորհուրդը և կարող ենք նման մարդու չընտրենք, այլ հավանություն տանք այնպիսի թեկնածուի, որն ունի բուհի զարգացման տեսլական: Մենք պետք է մեզ վստահենք, որ ընտրություն կատարենք և ընդունենք բանական որոշում:

Դ. Տեր-Ստեփանյան-ռեկտորի թեկնածուի համար նվազագույն ցենզի սահմանումն ի վերջո չի սահմանափակում գիտությունների դոկտորի առաջադրման հնարավորությունը:

Ս. Ապրեսյան-ես գտնում եմ, որ ռեկտորի համար անպայման պետք է սահմանվի գիտությունների դոկտորի ցենզ: Դեմ եմ, որ անցում կատարվի միաստիճան համակարգի:

Կարծում եմ, որ մեր նիստը ցանկալի հունով չի ընթանում, կարելի է չլարվել, հիշեցնեմ, որ նիստին մասնակցում են կառավարության ներկայացուցիչներ, եկեք ավելի կոռեկտ լինենք:

Վ. Եղիազարյան-մեր բուհն անցել է 50-ամյա ճանապարհ, որի ընթացքում ՎՊՀ-ն ղեկավարել են աշխարհահռչակ ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը, ԳԱԱ թղթակից անդամ Ռ. Եդոյանը, այլ անվանի պրոֆեսորներ: Հիմա, եթե օրենքն ընդունվի՝ գիտության թեկնածուի ցենզով, մենք բոլորս կենթարկվենք օրենքի պահանջին: Այժմ առաջարկում եմ, ներկայումս գործող կարգով, հայտարարել ռեկտորի թափուր տեղի մրցույթ:

Ա. Անափիոսյան-եթե մրցույթ հայտարարենք և դիմի արտասահմանում PhD պաշտպանած անձ, որի աստիճանը մեր թեկնածուից բարձր է, բայց դոկտորից ցածր, նա իրավունք ունի՞ մասնակցել մրցույթին:

Վ. Եղիազարյան-այդ դեպքում դիմում ենք ԲՈԿ, որը նույնականացման փաստաթուղթ է տալիս: Հետո մի պատկերացրեք, որ այստեղ դրսից կարող են գալ աշխատել ռեկտոր, դուք այստեղ իրավիճակը լավ չեք պատկերացնում, մեկ էլ կտեսնեք թևերից կբռնենք պատուհանից ցած կզցենք:

Ա. Անափիոսյան- դա արդեն քրեական գործ կլինի:

Վ. Եղիազարյան-իսկ ով ասեց, որ մենք քրեական գործից վախենում ենք:

Է. Խաչատրյան-ես անվստահության մթնոլորտ եմ տեսնում, որը խանգարում է աշխատել: Եթե խոսում ենք ռեկտորի մասին, պետք է հստակեցնենք՝ մենք նրանից ակնկալում ենք վարչական, թե գիտական աշխատանք: Այս հարցի պատասխանից կախված են մեր հետագա քայլերը: Խնդիրն այն է, որ հոգաբարձուների խորհրդին նայում ենք բուհից առանձնացված, մինչդեռ մեր գործողություններն ուղղված են ՎՊՀ-ի զարգացմանն ու բարգավաճմանը: Առաջարկում եմ շարժվենք օրակարգով և պահպանենք հարցերի քննարկման հերթականությունը:

Ջ. Ղուկասյան-օրակարգն արդեն հաստատված է, պետք է գնանք մինչև վերջ, երբ կգա հայտարարություն տալու հարցի քննարկումն՝ այդ ժամանակ կորոշենք: Իմ կարծիքով, ռեկտորը պետք լինի բարձրակարգ մասնագետ և լավ կառավարիչ: Ես հանդիպել եմ գիտությունների դոկտորների, որոնք մեղմ ասած չեն փայլել իրենց գիտելիքներով, միննույն ժամանակ հանդիպել եմ գիտությունների թեկնածուների, նույնիսկ առանց գիտական աստիճանի մարդկանց, որոնք փայլել են իրենց իմացությամբ ու լայնախոհությամբ:

Տ. Գրիգորյան-համաձայն եմ պարոն Խաչատրյանի հետ, եկեք հարցերը քննարկենք օրակարգով հաստատված հերթականությամբ՝ սկզբում փոփոխությունների մասը, այնուհետև ընտրության հարցը:

Մ. Շահվերդյան-կանոնադրության մեջ փոփոխման ենթակա բազմաթիվ կետեր կան, միայն առաքելությունն է, որ փոփոխության ենթակա չէ: Հարկավոր է գործող կարգով հայտարարություն տալ: Ստեղծվել է անվստահության դաշտ, որը գալիս է առաջին նիստից: Մինչև անվստահությունը չանցնի, մենք չենք կարող աշխատել:

Վ. Եղիազարյան-մրցույթը ձգձգելու պատճառով էլ անվստահություն է առաջանում:

Ա. Անափիոսյան-կարծում եմ, որ կանոնադրության փոփոխությունները և ռեկտորի մրցույթի հայտարարությունը հարկավոր է իրար կապել: Կարելի է հանձնախումբ ստեղծել, որը կզբաղվի փոփոխություններով: Հին կարգով հայտարարություն տալու պարագայում կարող ենք սահմանափակել գիտության թեկնածուների իրավունքները: Համաձայն եմ այն տեսակետի հետ, որ գիտական աստիճանը մարդու պատրաստվածության և գործնական հատկանիշների հետ կապ չունի: Եթե միմյանց վստահենք, կարող ենք լավ ընտրություն կատարել: Անհրաժեշտ է թիմ ձևավորել, աշխատանքներ տանել և գիտությունների թեկնածուներին էլ հնարավորություն տանք, որ մասնակցեն ռեկտորի թափուր տեղի մրցույթին:

Վ. Եղիազարյան-դուք արհամարհում եք գործող կարգը:

Է. Խաչատրյան-ինձ համար էլ է կարևոր, որ գիտությունների թեկնածուն կարողանա մասնակցել ընտրությանը: Մա մեր հարկերով պահվող բուհ է և ես ուզում եմ տեսնել, թե ով է այն ղեկավարելու: Ես որպես քաղաքացի ուզում եմ, որ բուհը նորմալ ռեկտոր ունենա, հնարավորություն տվեք ունենալ բուհ, որին ես վստահում եմ, ուզում եմ, որ բուհն ունենա նոր աշխատատեղ, ներգրավվեն նոր կադրեր:

Հ. Ղազարյան-ես ևս ուզում եմ, որ գան նոր, ազգասեր մարդիկ:

Ա. Անափիոսյան-առաջարկում եմ ստեղծել հանձնախումբ, աշխատել կանոնադրության վրա, այնուհետև հայտարարել մրցույթ:

Ա. Շագաֆյան-հարգելի գործընկերներ, եթե այս առաջարկը քվեարկվի ես կողմ եմ, եթե ոչ՝ մնացած հարցերի վերաբերյալ ձեռնպահ եմ:

Դ. Տեր-Ստեփանյան-տիկին Անափիոսյանի առաջարկը բխում է հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 10-րդ կետի երրորդ ենթակետից (Խորհրդի համաձայնությամբ կարող է ստեղծել հանձնախմբեր և նշանակել դրանց նախագահներին, մասնավորապես, սույն աշխատակարգով նախատեսված՝ ՎՊՀ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) ու ՎՊՀ կանոնադրությամբ նախատեսված հարցերի նախնական քննարկում իրականացնելու, դրանց վերաբերյալ Խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար): Եթե մենք խնդիր ունենք ռեկտորի թեկնածուին

ներկայացվող ցենզի հետ, առաջարկում եմ ստեղծել հանձնախումբ և փոփոխությունները դնենք քվեարկության: Նախարարության հարգելի ներկայացուցիչներ, կա որոշակի ժամկետ, ե՞րբ օրենքի նախագիծը կդրվի հանրային քննարկման:

Է. Ալեքսանյան-ամենայն հավանականությամբ առաջիկա երկուշաբթի կամ երեքշաբթի:

Ա. Անափիոսյան-նախատեսվում է առաջիկա երկուշաբթի:

Վ. Եղիազարյան-ճիշտ կանենք, որ ստեղծենք հանձնախումբ, որը կաշխատի նախագծի հետ՝ հետևելով քննարկումներին, բայց այսուհանդերձ հարկավոր է ռեկտորի թափուր տեղի մրցույթի հայտարարություն տալ, քանի որ գործող կանոնադրությամբ ռեկտորի համար սահմանվում է գիտության դոկտորի շեմ, բայց ներկայիս պաշտոնակատարը գիտությունների թեկնածու է:

Դ. Տեր-Ստեփանյան-խնդրում եմ առաջադրել հանձնախմբի թեկնածուներ: Առաջարկում եմ հանձնախմբի աշխատանքների ավարտի համար սահմանենք երկամսյա ժամկետ:

Առաջարկվեց Է. Խաչատրյանի, Հ. Ղազարյանի, Է. Ալեքսանյանի, Վ. Եղիազարյանի, Ս. Շահվերդյանի, Տ. Գրիգորյանի թեկնածությունը, գիտխորհրդից նախնական առաջադրվեց Ֆ. Մովսիսյանի և Զ. Վարդանյանի թեկնածությունները:

Է. Խաչատրյան-հարկավոր է քվոտաներ սահմանել, մշակել ձևաչափ, հավաքել առաջարկությունները:

Ա. Անափիոսյան-եկեք մեկ շաբաթ սահմանենք ձևաչափի մշակման համար, մեկ շաբաթ էլ մնացած կառույցներից թեկնածություններ ներկայացնելու համար: Այս պարագայում աշխատանքները կարող ենք ավարտին հասցնել մինչև հունվարի 15-ը:

Ս. Ապրեսյան-մտահոգություն ունեմ, որ հանձնախմբի աշխատանքի պատճառով մրցույթի հայտարարությունը կհետաձգվի: Փաստորեն մինչև հունվարի 15-ը իրավունք չունենք մրցույթ հայտարարելու:

Ա. Անափիոսյան-երևի թե նպատակահարմար չէ:

Դ. Տեր-Ստեփանյան-օրակարգի հարցը դրվում է քվեարկության հետևյալ ձևակերպմամբ. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարու նպատակով երկշաբաթյա ժամկետում ստեղծել ներկայացուցչական հանձնախումբ: Աշխատանքների վերջնաժամկետ սահմանել 2020թ. հունվարի 15-ը:

Կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշվեց.

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 45-րդ կետի 3-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարու նպատակով երկշաբաթյա ժամկետում ստեղծել ներկայացուցչական հանձնախումբ: Աշխատանքների վերջնաժամկետ սահմանել 2020թ. հունվարի 15-ը:

3. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթի հայտարարություն:

Դ. Տեր-Ստեփանյան-հարգելի գործընկերներ, անցնում ենք օրակարգի երրորդ հարցի քննարկմանը:

Վ. Եղիազարյան-հաշվի առնելով, որ փորձագիտական հանձնաժողովը նախնական եզրակացության մեջ բացասական է գնահատվել ռազմավարության բացակայությունը, որը լուրջ բացթողում է և կապված է ընտրված ռեկտոր չունենալու իրողության հետ, ուստի առաջնորդվելով ՎՊՀ գործող կանոնադրությամբ հրատարարել ռեկտորի թափուր տեղի մրցույթ: Ի վերջո, բուհում կան մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում:

Ա. Անափիոսյան-առաջարկում եմ մրցույթն անցկացնել կանոնադրական փոփոխություններից հետո: Կարծում եմ, որ կառավարման համակարգի համար մինուս գնահատվել է ոչ միայն ռազմավարության բացակայության պատճառով, ի վերջո կանոնադրության 56-րդ կետը թե՛ ռեկտորին, թե՛ պաշտոնակատարին լայն լիազորություններ է տալիս: Եթե ինչ-որ բան չի արվել, համենայնդեպս դա պաշտոնակատար ունենալու պատճառով չի, որ չի արվել: Այլապես, եթե պաշտոնակատարը չունենար նույն լիազորությունները, ինչ ռեկտորը, ապա մենք ոչ հաստիքացուցակ կարող էինք հաստատել, ոչ բյուջե, ոչ էլ՝ մնացած կարևոր հարցերը:

Հաշվի առնելով, որ ստեղծվում է հանձնախումբ, գտնում եմ, որ մրցույթի հայտարարությունը կարող ենք հետաձգել 1.5 ամսով:

Ս. Ապրեսյան-առաջարկում եմ գալ փոխհամաձայնության: Ես կողմ եմ պարոն Եղիազարյանի առաջարկին, բայց ուզում եմ, որ գանք փոխհամաձայնության և հակադրության մեջ չմտնենք նախարարության ներկայացուցիչների հետ, հաշվի առնենք նաև նրանց տեսակետը: Ռեկտորի ընտրությունը կարևորվում է, հատկապես հավատարմագրման համար: Առանց ընտրված ռեկտորի բացասական ֆոն է ստեղծվում:

Ա. Անափիոսյան-շնորհակալություն պարոն Ապրեսյան, թեև ներկայացված ենք նախարարության քվոտայով, բայց այստեղ ենք որպես քաղաքացի: Ի պաշտոնե, իմանալով օրենքը, ուզում եմ նկատել, որ մեզ համար ևս կարևոր է ռեկտոր ունենալն, ուղղակի ուզում ենք, որ ընտրությանը մասնակցելու հնարավորություն ստանան նաև գիտությունների թեկնածուները: Գտնում եմ, որ այսքան սպասելուց հետո կարելի է սպասել ևս 1.5 ամիս:

Է. Խաչատրյան-ակնհայտ է, որ ռեկտոր ունենալն անհրաժեշտ է, բայց դեմ եմ քվեարկելու պարոն Եղիազարյանի առաջարկին, եթե կարգում փոփոխություններ կատարվեն, մենք կհայտնվենք իրավական կազուսի մեջ:

Դ. Տեր-Ստեփանյան-այսպիսով, ունենք երկու առաջարկ. 1. մրցույթ հայտարարել այս նիստում՝ ներկայումս գործող կանոնադրությամբ, 2. մրցույթի հայտարարությունը հետաձգել մեկուկես ամսով՝ մինչև կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

Քվեարկության եմ դնում առաջին առաջարկը. մրցույթ հայտարարել այս նիստում՝ ներկայումս գործող կանոնադրությամբ:

Կողմ՝ 9, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 1

Ընդունվեց առաջին առաջարկը:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով.

- 1) ՎՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
- 2) ՎՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
- 3) ՎՊՀ ռեկտորի ընտրության օրը սահմանել հայտարարության պատրաստ լինելուց հետո:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Դ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ԱՂԱԶԱՆՅԱՆ